ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 թվականի N 19-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման և հիմք ընդունելով կառուցապատողի կողմից տրված 16.01.2026 թ. ՃՀԱ/102/873-26 դիմում-հայտը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Գեղարքունիք մարզ, Ճամբարակ համայնք, Ճամբարակ քաղաք, Պ.Սևակ փողոց, 2/5 հասցեում գտնվող, Ճամբարակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասում 20 մ բարձրությամբ դրոշակաձողի, դրոշակաձողի պատվանդանի կառուցման և հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների կատարման նպատակով կառուցապատողին տրամադրել նախագծման թույլտվություն:
2. Կազմված նախագծային փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Վ. ԱԴԱՄՅԱՆ**

2026թ. հունվարի 21
ք. Ճամբարակ